

ԵՐԵՎԱՆԻ ՎԵՏԵՐՈՐԻ ԵՄԵ

# ՄՇԱԿ

Հ Ի Մ Ն Ա Դ Ի Բ Գ Բ Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:  
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ. 5 ԿՕՊ.  
Թիֆլիսում գրվում են խմբագրության մէջ:  
Մեր հասցեն՝ Тифлис, редакция „Мшакъ“  
Базарная ул. д. Тамашева № 16.  
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.  
Տ Ե Լ Է Փ Օ Ն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10-2  
(բացի կիրակի և սուս օրերից)  
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լոգով  
Յայտարարութիւնները համար վճարում են  
իրաւաւորները տողատեղին 10 կոպէկ  
Տ Ե Լ Է Փ Օ Ն № 253.

## ՄՇԱԿ

### ՅՈՒՆԻՄԻ 1-ԻՅ ՄԻՆՉԵՒ ՏԱՐ- ՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՐՈՒԲԼԻ

(36-րդ ՏԱՐԻ)  
ԱՊՐԱՐԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
ՉԵ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ  
ТИФЛИСЬ, Редакция „МШАКЪ“.  
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

### Չ ա ն գ ե գ ու ռ

գաւառի Ղափանի շրջանի գիւղական  
ՄԻԿԱՅԵՆ ԳՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԵՐԿԱՆՈՐ ԵՆ

### ՅԵՆՋԱՒՈՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Ամսական 35-40 ռուբլի ուժեղով, բնական, վառելիք և ծառա-  
Ցանկացողները մանրամասն պայմաններին հետ ծանօթանալու համար թող բարեհաճեն  
գիտնել մինչև յուլիսի 20 ր, ներկայացնելով իրանց կրթական ցնդի և ուսուցչական  
գործունէութեան մասին համառոտ տեղեկութիւններ հետևեալ հասցեով. Баку, К-ра  
Арамазды, А. Вацьянцу.  
(ապ. 5, 6, 8, 10, 12 առ.) 5-4

### Ս.-Պետերբուրգի

հայոց եկեղեցական խորհուրդը  
հաղորդում է ի գիտութիւն ուսանողու-  
թեան, որ այս ուսումնական տարին աղատ  
թուակ չը կայ:  
(ապ. 5, 10 առ.) 2-2

### ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼԻ

Աղբուրեան յորտաւան օրհորաց զպրոգի  
համար  
Հաղագրութիւն  
աւագ ուսուցիչ բարձրագոյն կամ մանկա-  
վարժական կրթութեան (ուսուցչական ինս-  
տիտուտաւարտ), շարժական 14 դաս, տա-  
րեկան 1200 ռուբլ. ուժեղով: Մնացորդները  
վկայագրելով պէտք է ուղարկել մինչև  
յուլիսի 15-ը այս հասցեով. Александрополь,  
Приходскому попечительству армянской  
церкви св. Богородицы.  
Ս. Աստուածածնի մի. հոգաբարձութիւն  
(6. 5. չ.) 10-9

### ՈՉ ՄՐՈՎ ՈՉ

Մշակի երեկվայ համարում ամե-  
րիկաբան հայերից մէկը, Գ. Նշիւնան,  
գեանդի էր մի «Նամակ խմբագրու-  
թեան», որի մէջ լայնելով իր ցա-  
տարն և զայրով ձայնակ-Երվարի  
սպանութեան տախթով իր վրդովմուն-  
քի մէջ բացազանում է, թէ նա կու-  
զենար մի քանի թոյնի յեղափոխա-  
կանների գլուխները:  
Մենք լաւ հասկանում ենք, որ  
Նշիւնանի գործածած նախադասու-  
թիւնը միայն մի փոխաբերական դար-  
ձուած է, որ նա բոլորովին սուր  
խաղաղցող մի անձնատուրութիւն չէ,  
բայց մենք օգտուում ենք դէպքից  
դարձեալ մի անգամ ևս շեշտելու, որ  
հիմնովին սխալ է այն հոգեբանու-  
թիւնը, որ սրի անուն է տալիս մի  
այնպիսի խնդրում, որը գնդադու-  
թիւնները անաչացել են սրի անգուսպ  
և անպատասխանատու գործածու-  
թիւնից:

Ոչ, Սուրբ աղտոյի դեր չէ կարող  
կատարել և երբեք էլ չը պէտք  
է կատարել:  
Այդտեղ պէտք է արմատական և  
վճռական դեր կատարեն հասարակա-  
կան գիտակցութիւնը և հասարակա-  
կան կարծիքի ձայնը:  
Ոյո, հասարակական կարծիքի ձայնը,  
հասարակական բողոքը և հասարակա-  
կան կշիռը մեր համար:  
Մի՞թէ սուրբ քիչ մարդիկ է վայր  
գլուխ ձնեց նոյն սպանիչների շարքե-  
րից: Ըստ և շատ բայց դրանով և  
զեղեռնագործութիւնները և ոճիրները  
չեն վերացել և չեն էլ վերջանալ:  
Իսկ տեսէ՛ք թէ ինչ փրկարար և  
զբաւան արդիւնքներ առաջացրեց հա-  
սարակական բողոքի այն ուժեղ ար-  
տաշատութիւնը, որ ցոյց տուեց ա-  
մերիկական ամբողջ մամուլը Թաւա-  
նանի սպանութեան առիթով:  
Ոչ մի սուր, ոչ մի գնդակ չէին

կարող այնքան զսպել լինել մոլորու-  
թեան և խելագարութեան մատնված  
խմբի համար, որքան աղիւս հասա-  
րակական կարծիքի յայտնած այն  
բուռն և միահամուռ յանդիմանութիւ-  
նը և նախախնդր ռճրագործների դէմ,  
որոնք լավեցին նոր Աշխարհի  
գանազան կողմերից:  
Մեր հայկական կեանքի փաստերն  
էլ կարող էին որոշ ապացոյց ծառա-  
յել հասարակական գիտակցութեան  
կատարած նուաճումների և աւաջա-  
րած բարի հետեւանքների համար:  
2րդ պէտք է մտաւնալ, որ լեզուա-  
խախտ գործողները, որոնք բուռն  
են թէ Եմբիկայի, թէ Եմբիկայի և  
թէ հայաբնակ ուրիշ լեզուների հայկա-  
կան շրջաններում, սովել են մի շարք  
տրամադրութիւններով, որոնց հիմքը  
եղել է տառապող հայ մողովքի այն  
սրտամաշ հեծեմանը, որ լավել է  
մայր երկրից տարիներ շարունակ  
կայաց զինվար զարդիկ չեն կարողա-  
ցել ըմբռնել խելացի գործունէութեան  
կողմնակիցութիւնը, որի քաղաքական  
կարգաւորութիւնները լարիւրեմութե-  
անում, իսկ մի քանիսն էլ անձնատուր  
լինելով շահագործական նեղ դիտու-  
մների, ընկել են զարտուղի շաղկերի  
վրայ:

Եւ հասկանալի է, որ այդպիսի  
հանգամանքներում դեր են կատարում  
ընդհանուր տրամադրութիւնները, ո-  
րոնք և ապարկել են միայն այսօր  
գործողի, մի պետի և մի հերոսի, իսկ  
վաղը մի ուրիշին: Վայր կը գորդի  
մէկը, նրան կը փոխարինի մի ուրիշը  
և, ի հաւրէ, ոչինչ չի փոխել իրակա-  
նութեան մէջ: Արդիւնքն էին փոխել  
տրամադրութիւնները, որովհետեւ գոր-  
ծողները հոգ են գտնում իրական պա-  
րագանքի մէջ:

Բարեփոխութիւնը կը սկսվի միայն  
այն օրից, երբ հասարակական գի-  
տակցութիւնը կը սկսէ հեղինակորէն  
զատել բարի-չարիքը և հանդէս կը  
գայ իրեն հասարակական կարծիք  
զօրեղ արտայայտութեան:

Այո, անհրաժեշտ է հասարակական  
կարծիքի ներդրական արտայայտու-  
թիւն և ոչ թէ սուր կամ այս ու  
այն գործողի արեւատական հեռացում:  
Մենք յամառ կերպով բողոքել ենք  
որի գործածութեան դէմ մեր հասարա-  
կական խնդիրների լուծման գործում  
և կը բողոքենք շարունակ, հրաւիրելով  
առողջ հասարակական գիտակցութեան  
իշխանութիւնը կարգաւորելու կեանքի  
առաջ մղած կեանքները և բարդու-  
թիւնները:

Մենք զարմալ կը կրկնում ենք, որ  
մեր յօդուրներն առիթ տուող նշխանք  
անհետին սուր ինքնազննելու ջատագով  
չէ և ընդհակառակը բողոքում է սրի  
կատարած անիրաւութեան դէմ. բայց  
և այնպէս նոյն իսկ փոխաբերական  
մտքով մենք դէն ենք մղում սրի անու-  
նը և կը ցանկանայինք, որ մեր հասա-  
րակութիւնը տողովքէր միահամուռ  
ցանկութեամբ գիտակցական տեղ կառ-

նալու իր գործերին և երկրի չը կրե-  
լով անհեղք և խմբերի բնութիւն-  
ներից՝ կարգադրէր իր կեանքը արդար  
և խելացի կերպով:

Ա. Բալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոնդոն, 8 յուլիսի

Լորդերի ժողովը երկրորդ քննը-  
ցանութիւնից յետոյ 123 ձայնի սեծա-  
մանութեամբ 16-ի դէմ՝ ընդունեց գա-  
նաւանքներին թոշակ տալու օրինա-  
գիծը: Որինպէս զէմ խօսող հետաք-  
նոր ի միջի այլոց մատնացոյց էին  
անում, որ թոշակներին գումար յառ-  
կացնելու կարող է արդեւ հանդիսա-  
նալ կայսրութեան ինքնապաշտպանու-  
թեան գործին:

Բագոն, 8 յուլիսի

Յուլիսի 6-ին, ցերեկվայ ժամը մօ-  
տաւորապէս 12-ին, Համախնկայա  
մասում շինվող գործողների վրա  
կանգնած պահակների վրա գնդակներ  
են արձակել:

Դահլիզ գիւնդներից երկուսը երբ  
մտնում են պահակատեանի բակը և  
ուզում են ջուր խմել, մի ինչ-որ տե-  
ղից որոտում է ատրճանակի գնդակը  
և թռչելով գիւնդներից զլխի մօտով  
միւսում է պատի մէջ:

Հիւնդները վազում են դէպի այն  
կողմ, որտեղից կրակել էին, և տես-  
նում են փախչող մի թուրքի, որը  
շտապում էր թաղնիկը բարերի ու  
փայտեղէնների կտու:

Հիւնդները հասնում և բռնում են  
նրան:  
Փախչողը բազուկից է, Գերբայ  
Բալա-Սի Զարբաթով աղաւթնումով:

Նրա մօտ գտել են տարձանակ, ի  
փամփուշտներով, որոնցից մէկը կրակ-  
ված էր նոր:

Կ. Պոլսի, 8 յուլիսի

Հարունակում են երիտաւարը  
թիւրքերի տրորքիտաւան գործողու-  
թիւնները 3-րդ զորաբաժնի շրջանում  
Սալոնիկում: Սալոնիկում վրդաւորված  
է փոխ-գնդապետ Նազիմը, Սկիւսում  
սպանված է հեծկարգի փոխ-գնդա-  
պետը, Գիրբում սպանված է մի լէյ-  
տնապետը:

Բեռլին, 8 յուլիսի

«Frankfurter Zeitung» լրագրին հեռա-  
գրում են Սալոնիկից, որ Հիւլիսի-  
շահ հեռագրով ինչորքը և ստացել  
Նիւդի-բէլից՝ միջոցաւ սուլթանի  
մօտ սահմանադրութեան մտցնելու  
նպատակով: Նիւդի-բէլի հաղորդում  
է, որ գնում է դէպի Եգիպտոս՝ նախա-  
պատրաստելու այնտեղ ազգաբնակու-  
թիւնը յեղափոխութեան համար:

«Köln. Zeit.» լրագրին հեռագրում են  
Բեռլինից այն բանի առիթով, որ Գեր-  
մանիան իր պաշտպանութեան տակ է  
առել 2-րդ սահմանում ապրող թիւրքե-  
րին: լրագրին ասում է, որ թիւրքաց  
կառավարութիւնը ինչորքը է Գերմա-  
նիային վերցնել թիւրքերին իր պաշտ-  
պանութեան տակ: Երկրպէս դէպքում  
թիւրքիան վարվել է որպէս սուլթանի  
ազգ, իսկ Գերմանիան, որպէս բարի  
շտապեցութիւնները մէջ գտնվող թիւր-  
կանի և ֆրանսիական իշխանութիւն-  
ների միջև:

Պետերբուրգ, 8 յուլիսի

Բարձրագոյն հրամայված է ֆին-  
լանդական զինեղալ - նահանգապետ  
Բեկմանին նորին Պայսերական Մե-  
ծութեան Բարձրագոյն անունից Բա-  
նալ օգոստոսի 1-ին (ն. ա.) Փիւլիս-  
դական Մեծ Իշխանութեան սէյմը:  
Բարձրագոյն հրամայված են 92  
մանր օրինագծեր, որոնք հաւանու-

թիւն են գտել Պետական Խորհրդի և  
Դումայի կողմից, զլխաւորապէս մի-  
ջոյններ յատկացնելու մասին պետա-  
կան գանձարանից ատենաների գա-  
նազան պէտքերի համար: («Հ. Գ.»)

Պետերբուրգ, 8 յուլիսի

Բեռլինի Վոլֆի գործակալութեան  
հեռագրի հիման վրա երեկ նաուէլմից  
ծովապետ Բոդդեմիսկու մահվան  
մասին հաղորդված տեղեկութիւնը չէ  
հաստատվում:

Բուխարս, 8 յուլիսի

Գիշերը ական փորելով փախան 20  
կայանաւորներ: Նրանցից 16 հողի  
բռնված են:

Պետերբուրգ, 8 յուլիսի

Էստէնտուկում բժկվող գրող Կուպրի-  
նի առողջական դրութիւնը վատացաւ:  
(«Հ. Գ.»)

Կ օ պ է ն հ ա գ է ն. — Ամիլիէնբուրգում է պա-  
տի նախագահ Ֆալթերի տրված ճաշի  
թագաւորը ճառ արտասանեց, որի մէջ այն  
միտքը յայտնեց, թէ համոզված է, որ նա-  
խագահին ցոյց տուած սրտագին ընդունե-  
ութիւնը կը ծառայէ որպէս բարեկամու-  
թեան և համակրութեան զգացմունքների  
առհասարակ, որ թագաւորը և իր ժողո-  
վուրդը առածու են և դարերի ընթացքում  
առածու էին դէպի ֆրանսիական ժողո-  
վուրդը: Ապա թագաւորը առաջարկեց  
Ֆրանսիայի բարօրութեան և ֆրանսիական  
կառավարութեան կենացը, որի ներկայացու-  
ցիչն է հանրագիտութեան նախագահը Ֆա-  
լթերը շնորհակալութիւն յայտնեց ընդունե-  
լութեան համար և ջիւր ցանկութիւն  
յայտնեց դարաւոր կապի մտադարձ  
բանաւոր, որոնք երջանկաւոր կապում են  
երկու կողմերը, և առաջարկեց թագաւորի,  
թագուհու, արքայական ընտանիքի ու Դա-  
նիայի մեծութեան և երջանկութեան կե-  
նացը: («Հ. Գ.»)

Մասնաւոր հեռագրական տեղեկութիւն-  
ներից այնպէս էր երեւում, որ իբր թէ  
բրիտանական կառավարութիւնը առաջա-  
դրութեւն է արել պարսից շահին պաշտո-  
նից հեռացնելու կողմնակից հրամանատար  
գնդապետ Լեւոնթինը Ադր լուրքը կատե-  
րելի կերպով հերքելու են ուսաց ար-  
տաքին գործերի միջնորդութեան մէջ: Մի  
նիստում թեան անցած տեղեկութիւնների  
համաձայն, այդպիսի առաջարկութեան ան-  
յու համար ոչ մի շարժում չը կար, քա-  
նի որ գնդապետ Լեւոնթինը, իբրև սրբազա-  
կան, կողակների բրիգադայի հրամանատար,  
կատարում է միայն շահի հրամանները, և  
ինքնուրույն կերպով ոչինչ չէ անում:

ԳԻՏԵՐԸ, ՊԱՐՈՎԱՍՏԱՆԻՄ

Թարիգ, 30 յուլիսի, երեկոյան  
Այսօր կէսօրին Բաշի-խանը մտաւ քա-  
ղաք և իջանեց արքայական աղբիւ: Այսօր  
շահից հեռագրել էր ստացվել փոխ-կառա-  
վարապետի, Բաշի-խանի և Սամը-Դովլէի  
հասցեով, որոնց մեղադրում էր, որ բաշա-  
կան գիւնդական ոյժ ունենալով հանդերձ՝  
չեն կարողանում քաղաքը հանդուստեղի  
կիստ պատուէր է տալիս, որ այսօր մինչև  
երեկոյ անպատճառ աշխատեն Սաթթար-  
խանի և իր համախոհներին ընդել կամ  
ցրել և յայտնել հոգեորակաւորութեան, որ  
ինքը աշխատում է յօգուտ հայրենիքի և  
ժողովրդի: Ինչպէս երևում է, այդ հեռագրի  
հիման վրա էր որ կառավարութիւնը այ-  
սօր խիստ և վճռական միջոցների դիմեց:  
Կիւրը շատ կատաղի էր, կառավարութիւնը  
է անգամ թնայածագութեան դիմեց:  
Սաթթար խանը չորս անգամով պատահա-  
նեց. թնայած իր քաղաքը անշահ է եղել,  
բայց ուզում էր 30 մարդ շարքից: Մինչև  
ուշ գիշեր կոխը շարունակեցին, տեղի  
տուղ չեղաւ. այսպիսով շահի հրամանը  
այսօր կատար չարաւ...

1 յուլիսի

Գիշերս հրացանագութիւնը ընդհատ-  
հատ շարունակեց մինչև լոյս: Այսօր կո-  
րէր բոլորովին այն դիրքերում էր: Հաջի  
Իրախանի տան դիրքերից հրացանի էր  
բռնված օտարը—կառավարութեան զինա-  
նոցը. վերջինս մէջ գտնվողները (հակա-  
ռակարկաններ) զինաւորում չէին միայն:

տականների մի մասն էլ ուզում էր ան-  
ջուռանի վրա կանգնած զրօշկը կրել,  
այդտեղ էլ երկուստեք գնդակագութիւնը  
անօգուտ անցաւ:

Այսօր Սաթթար-խանի դիրքերում կո-  
չեղաւ: Կովկասից եկող երկու ֆէդայի-  
նի Բաշի-խանի ձիաւորների ճանապար-  
հին վերաւորել էին. մէկին մեռած, միւսին  
կիսածու Ամրակէ թաղը բերին:

Անգլիական «Times» թերթի թղթակցին  
ճանապարհին ձիաւորները ձերբակալել են.  
հրապտատարանի անմիջական դիմումով  
իսկոյն արձակվեց և անմիջապէս քաղաք մտաւ:  
Բաշի-խանի ձիաւորները, թէ չըջնալարում  
և թէ քաղաքում իրանց գրաւած թաղերում,  
կողպաւորում են ամենքին: Ռուսաց բանկի  
կառավարից ջանքերով Մարաշան թաղը  
բաւական ապահով է ձիաւորների սխա-  
ղործութիւններից:

Հայոց թաղերում պատասարվողների թի-  
ւը հեղհեղեղ աւելանում է: Արամեան և  
ս. Անանյանս Կարոյցների գաւառաները  
լցված են թուրք ընտանեկներով: Վաղը  
սպանվում է վճռական գործողութիւնների  
Ասում են, որ վաղեմից Բաշի-խանի  
ձիաւորները պիտի կուեն ինչպիսի զեկա-  
վարութեամբ: Մինչև օրս եղած կռիւններում  
մասնակցել են միայն Դավաշի թաղացիք  
4 Զառուգի ու Սուլայի-Եղգամի ձիաւոր-  
ները: Որովմա է ամբողջ թաղը թնայնու-  
թի կապել:

2 յուլիսի

Գիշերս հատ հատ հրացանագութիւնը  
շարունակեց: Առաւօտեան ժամը 7-ին կա-  
տաղի հրացանագութիւնը սկսեցին, իսկ  
ժամը 10-ից անընդհատ մինչև ժամը 4-ը  
լսելի էր թնայնութիւնը: Անգլիայի հա-  
կապական լուրեր ենք լսում, որոնց բու-  
րովին հաւատ ընծալի չէ կարելի:

Սաթթար-խանի կողմնակիցները մուսե-  
տիկով յայտարարում էին, որ իբր երկու  
թնայնութիւն են դրուել և յաղթել են հակա-  
ռակորդներին դիրքերից դուրս հանելով:  
Սմայր տարածում են, որ Սաթթար-խանը  
երեկոյան 50 հոգով քաղաքից հեռացաւ:  
Ճիշտն այն է միայն, որ «Times»-ի թղթա-  
կիցը այսօր երեկոյան դիմաց Ամրակէ  
թաղը, տեսակցեց Սաթթար-խանի հետ:  
Ասում են, որ իբր Սաթթար խանը ասել  
էր, որ իրանց շահի դէմ ոչինչ չունենի, ի-  
րանց կիւրը անշուշտներին և Դավաշի  
թաղացիների հետ է: Ճանկութեւն է յայտ-  
նել, որ կառավարութիւնը ցրէ «Թնայնութիւն»  
անշուստները, ինչպէս որ ցրված է ազգային  
անվտանգը, որից լսող միայն իրանք էլ  
զենքերը ցած կը դնեն և հպատակութիւն  
կը յայտնեն կառավարութեան:

«Нов. Время» թերթի թղթակցին էլ  
գտնվում է թաղերում:

Բաշի-խանի ձիաւորները թէ քաղաքի  
ներսում և թէ չըջնալարում գրաւված են  
կողպաւորում:

3 յուլիսի, առաւօտեան

Այսօր դեռ էլ ճիշտ պարզված չէ երեկ-  
վայ կուր ժամաւանութիւնը, գիշերս  
հրացանագութիւն կար, բայց այսօր կար-  
չեց զինաւորում է Սաթթար-խանի քաղաքից  
հեռացում չէ ճշտվում: Երեկվայ գոհեր  
թիւր մօտ 100 են հաւուտ երկու կողմից:  
Այսօր ասում են, որ Ամրակէ թաղից  
կառավարութեան վրա է եկել Բաշի-խանի  
մօտ և երեք օր ժամանակ խնդրել, որպէսզի  
համոզեն Սաթթար-խանին քաղաքից հե-  
ռանալ կամ անձնատուր լինել: Բաշի-  
խանը մի օր միայն խոստացել է ժամա-  
նակ տալ: Իրեն զինաւորաւորը այդ բանակ-  
ցութեան հետեւեց











